16/29 ՄԱՐՏ 1904

Ա. ՏԱՐԻ. — ԹԻՒ 40

ԵՐԱԶՆՈՒԹԻՒՆ

ԾԱԲԱԹԱԹԵՐԹ
Բաժանորդագին՝ 10 Ֆր. տարեկան

Հայոց՝
Réd. du jour. „VERADZNOUTIOUN“.-Roustchouk
Ред. на в. „ВЕРАДЗНУТЮНЪ“. — Русе

ՀԻԴՐԱՅ

Ֆրանսիական մի թերթում կարդում ենք հետեւեալը, որ քաղուած է Ս. Պետերբուրգից գրուած մի նամակից.—

«Գալիցինը, վերջնականապէս խաղաղեցնելու համար երկիրը (Կովկասը) մշակել է նորերս ռուսացման մի նախագիծ, որի գլխաւոր գծերի վրայ կարող եմ մատնանիշ լինել։ Խնդիրը պարզապէս կայանում է Ներանում, որ Կարսի, Երեւանի, Շուշիի և Թիֆլիսի ազգաբնակութիւնը (հայ) պէտք է փոխադրել տուեն Սիբիր և Ռուսաստանի հարաւ-արեւելեան կողմերը։ Այդ նախագիծը ներկայացրել է Պեւեի միջոցով ցարին, որը վաւերացրել է այն։ (Նոտրգրերը Պետերբուրգի թղթակցինն են)։

Եթէ այդ լուրը ճիշդ է — և Գալիցինի դիպլոմատական գլուխը, որ ղեկավարում է վախկոտութեան հանճարով, ընդունակ է յօրինելու այդպիսի վայրենի տխմարութիւններ, — եթէ, ասում ենք, այդ լուրը ճիշդ է, դա ապացուցանում է առաջնապէս մի բան. — չափազանց չանասէր արշի ծառայութիւն արշապետին։ Պէտք չէ զարմանալ բնաւ, որ ցարի ծառաները, փոքրից մինչև մեծ, գործ են դնում ամեն չանք հայ ժողովրդի աչքին լիովին ատելի ու զզուելի դարձնել իրան ցարին իր կառավարական ամբողջ մեքենայով հանդերձ։ Եթէ դա չէ ծառայում ցարի փառքին և ո՛չ էլ նրա կառավարութեան հեղինակութեան ու հաստատականութեան, դա ըստ ինքեան մի մեծ ծառայութիւն է ժողովրդին։ Վախկոտ գաղան Գալիցինը, որ գիշեր-ցերեկ դողում է՝ չը լինի թէ իր պալատի տակ հայերը դինամիտ անցրած լինեն, հէնց ինքն այլ կերպ չօրաւոր դինամիտ է պատրաստում Կովկասում։ Այդ դինամիտն է իրա իսկ հանճարեղ նախագիծը ռուսահայերի տեղափոխման նկատմամբ։ Քանի տարուայ յեղափոխական քարոզը չէ կարող տալ զայրոյթի այնպիսի մեծ չօրութիւն ռուսահայերին ցարիզմի դէմ, որքան Գալիցինի նախագիծ-դինամիտը։ Եւ այս վերջին դինամիտն այլ կերպ ուժով կը պայթէ ցարիզմի չէնքի տակ Կովկասում, եթէ չենթադրենք որ նրա, դինամիտ-նախագծի, բնական ճակատագիրն է լինելու՝ ռուսական պետութեան ոճրագործութիւններով լի արխիւում փտել պատմութեան փոշիի տակ։

Կայ, յիրաւի, բօպէներ, երբ չը նայելով այն սարսափելի դըրութեան, որ ստեղծել է Գալիցինը հայերի գլխին Կովկասում. չը նայելով այն քաղաքականութեան սիստէմական բռնութեան ու շարունակական խելագար ճնշման, որ վարում է ցարիզմն ամբողջ Ռուսաստանում և մասնաւորապէս ռուսահայերի դէմ. չը նայելով այն պատերազմական վիճակին, որ Կովկասում ամեն-մի բնակչի, և մասնաւորապէս հայի, կեանքը դարձրել է խաղալիկ մի յետնեալ ոստիկանի քմահաճոյքին և ամբողջ ռուսահայերի ճակատագիրը դրել Գալիցինի պէս մէկ աւազակի ոճրագործ և արիւնաթաթախ ձեռքը, —դարձեալ թւում է, որ ռուսահայերը պէտք է հօմերական ծիծաղով դիմաւորեն այն անհեթեթ, զառանցական, ցնորական նախագծի սպառնական ուրուականին։ Ռուսահայերը պէտք է մեծ վստահութիւն ունենան իրանց ոյժի, կամքի ու վճռականութեան վրայ, պէտք է ցոյց տան հասուն մի հասարակութեան գիտակցութիւն, ինքնաճանաչ ընթացք և գործօն էնէրգիա ու նախաձեռնութիւն ինքնապաշտպանութեան գործում, և, հետեւաբար, ո՛չ մի երկիւղ չը կրեն այդպիսի դինամիտներից՝ որքան դրանք ինում են սոսկ թղթէ դինամիտներ և որքան դրանց գործադրութեան համար ցարիզմն իրան տեսած կը լինի դէմ յանդիման ժողովրդային ընդհանուր ըմբոստութեան և անվհատ դիմադրութեան։

Անշուշտ, Գալիցինի բերանում դեռ մնացել է մեղրի պէս համեղ հայ եկեղեցապատկան հարբստութիւնների ճաշակը։ Աւազակային յարձակումով գողանալով հայ հասարակութեան այդ հարստութիւնը, նա հիմա երազում է հայերին մասսայով հեռացնելով Կովկասից Սիբիրի և Թիւրքեստանի ամայի խորերը, վայելել նաև այն կայքերը, գոյքերն ու դրամները, որ հայերը կը թողնեն իրանց յետեւից Կովկասում։ Պատառը համեղ է, պատառը խոշոր է, խիստ խոշոր, կասկած չը կայ, և կարողէ ախորժելի լինել Գալիցինի պէս շատ և շատ չնորի կոկորդին՝ մինչև իսկ մինիստր Պլէւէի կատարեալ ատամոքսին։ Բայց այդ դեռ չէ նշանակում, որ այդ պատառը հայերը կը մեծարեն նրան ոսկէ պնակի վրայ՝ հիւրասիրութեան աղ ու հացի կողքին։ Միւս կողմից ռուսահայերին բնաջինջ անելու ուրիշ ամենահաստ և ամենալաւ միջոց չի գտնուիլ, եթէ ոչ Սիբիրի սառնամանիքները և վայրենի Թիւրքեստանը։ Այդ միջոցն այն առաւելութիւնն ունի մանաւանդ, որ ցարիզմի ծակ ու դատարկ գանձարանին շատ ադամ կը նստէ, քանի որ զօրքերի, զէնքերի ու հրանիւթների պէտք չի լինիլ, մի բա՛ն, որ մեծ ծախսեր ու շատ աշխատանք ու քրտինք կը պահանջէր, եթէ Գալիցինի թեթեւ ձեռքով հրաման խնդրուէր ցարից կոտորել ռուսահայերին։ Ինչպէս տեսնում ենք, Գալիցինն իբրև դիպլոմատ՝ խնայողական մեծ միջոց է գտել ցարիզմի բիւդժէտի համար, միանգամայն նախագծելով լեցնել այդ Դանայեան անյատակ տակառը հայկական հարստութեամբ։ Միւս կողմից էլ, իբրև հայրախնամ փոխարքայ Կովկասում, նա հայերին ուզում է տալ հանրական անցագիր մի երկար ճանապարհորդութեան համար, իբրեւ օդափոխութիւն, դէպի այնպիսի սքանչելի տեղեր, որտեղ քիչերը կենդանի կը հասնեն և որտեղից այլ ևս վերադառնալիք չը կայ։

Այդ բոլոր նախագծերն, արդարեւ, նոյնքան ծիծաղելի են, որքան և լաց պատճառող, նոյնքան անհեթեթ են, որքան և զայրացուցիչ առողջ բանականութեան տեսակէտից։ Բայց մի կառավարութիւն, որ ընդունակ է ամեն գաղանութեան, որպէս և ամեն խելագարութեան, իրանից ներկայացնում է կատաղած մի շուն, որ պէտք է սպանել յանուն հասարակութեան փրկութեան։ Բայց այդ կատաղած շունն իսկապէս հաղարագլուխ հիդրայ է, իր անթիւ ոտքերով և անճառնի, հրէշաւոր մարմնով տարածուած ամբողջ Ռուսաստանի վրայ մի ծայրից մինչեւ միւսը, խեղդելով ամբողջ ժողովրդներ, լափելով ամեն հարստութիւն, անյագաբար կուլ տալով ամբողջ երկրի կենդանարար հիւթն ու արիւնը։ Եւ այդ հիդրային չախչախելու մեծ ու փրկարար գործն ընկած է նոյնպէս Հայերի վրայ, որպէս և Ռուսաստանի մնացած բոլոր ժողովրդների վրայ։ Եւ կը գայ օրը, և այն հեռու չէ, երբ այդ ժողովրդների յեղափոխական տարրերը, միացած միմեանց հետ և միահամուռ ոյժերով, և ազատութեան միակերպ ծառաւով ու ոգևորութեամբ՝ կը սատկեցնեն հիդրային։ Եւ հէնց այդ օրւայ համար է, որ Ռուսաստանի ժողովրդներն իրանց յեղափոխական տարրերով պէտք է պատրաստուեն, ամենքը, ամենքը, ամենքը։

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆՆԵՐԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

II.

Կովկասահայ քաղաքական կուսակցութիւնները

(Շար. նախորդ թիւէն եւ վերջ)

Իրենց յեղափոխական բնաւորութեամբ (թէեւ տարբեր սկզբունքներից ելած եւ տարբեր նպատակներ ունեցող) տարբերւում են այդ երեք կուսակցութիւնները չորրորդ՝ ազգային-պաշտպանողական կուսակցութիւնից։ Սոցիալ-դեմոկրատիայի ընդհանուր աշխարհայեցողութիւնն է յեղափոխական, իսկ ազամիտ բուրժուազիան յեղափոխական է՝ քանի դեռ օպոզիցիայի մէջ է. այնինչ ազգային-պաշտպանողական կուսակցութիւնը ըէակցիոնական է իր էութեամբ։ Առաջին կուսակցութիւնները՝ քաղա-

քական արդի ընդհանուր դրութիւնից դժգոհ՝ յեղաշրջել են ուզում քաղաքական ամբողջ շինուածքը, իսկ վերջին կուսակցութիւնը կամենում է ազգի եւ եկեղեցու միջեւ այժմ ունեցած բաւարար թէ անբաւարար իրաւունքները միայն պաշտպանել։ Թէեւ նա էլ է երբեմն դժգոհ, բայց նրա դժգոհութիւնը սահմանափակւում է պետութեան միմիայն հակահայ եւ ազգային եկեղեցու նկատմամբ բռնած քաղաքականութեամբ եւ արտայայտւում անմիջական ու զօրեղ հարուածի ժամանակ, բացառապէս հայ ազգի «բարձր» աւանդութիւնների եւ օրինական իրաւունքների ձեռնամխութեան դէպքում։

Այդ կուսակցութիւնը պիտի լինի, այսպէս ասած, արշակաւանների կուսակցութիւն։ Նրանք, որոնց ընդհանուր աշխարհայեցողութիւնը պահպանողական է. նրանք, որոնք չեն կարողանում համբերել յեղափոխութիւն ասած բանը. նրանք, որոնք միւս կուսակցութիւնների մէջ տեսնում են աւելորդ, անժամանակ եւ անտեղի պահանջներ. նրանք, որոնք քաղաքական կեանքի մէջ աւելորդ մսագնդեր են. բայց «հասարակական կարծիքից» ծածկուելու համար ստիպուած են մորթ քաշել վրայները, — պիտի թափեն այդ կուսակցութեան մէջ։ Նա բաղկացած պիտի լինի ընդհանուր առմամբ հոգեւորականութիւնից, սենտիմենտալ եկեղեցասէրներից, սկեպտիկ եւ պլատոնիկ ազգասէրներից, տաճկահայկական յեղափոխութիւնից զատ ուրիշ բան չընդունող հայրենասէրներից, քաղաքական գոյն չունեցող՝ բայց ժողովրդի բերանից խօսող ինտելիգենտներից եւ նման tutti quanti-ներից։ Թէեւ այդ կուսակցութիւնն այդչափ խառնաշփոթ եւ բազմադիմի է երեւում, այնուամենայնիւ ոչ տուողները պիտի լինեն վեղարն ու փարաջան եւ Տաճկահայաստանի սուրն ու ատրճանակը, որոնց քաղաքական խափուսիկ դէվիզն է՝ ինֆնապաշպանութիւն։

Ռուս հզօր միապետութեան դէմ չի կարելի կուռել ուժերի անհամապատասխան լինելու պատճառով եւ այն ուրիշ հեռաւոր բաների համար, ասում է հոգեւորականութիւնը. այնքան էլ լաւատես չպիտի լինել եւ կարծել, թէ ցարիզմը անկման վրայ է եւ անկումից յետոյ կը բարեփոխուի հայ եկեղեցու՝ որ միեւնոյնն է թէ ազգի՝ դրութիւնը։ Աւելի խելացի է, կանգնել այսօրուայ իրական հողի վրայ եւ աշխատել ազգի եւ առաքելական սուրբ եկեղեցու ունեցած՝ պետութեան չնորհած իրաւունքները պաշտպանել։ Կը բաճատել են որոշ չափով կաթողիկոսի իրաւունքները, խլել են եկեղեցու հարստութիւնը, վաղն էլ բոլորովին կը խլեն կաթողիկոսի իրաւունքները, միւս օրը՝ եկեղեցին եւ այդպիսով հայութեան գերեզման կիջեցնեն, չէ՞ որ եկեղեցին եւ կաթողիկոսութիւնն է ազգի գոյութեան միակ կրիտերիան . . .

Հոգեւորականութեան այդպիսի դատողութիւնն ունի իւր իրական հիմքը։ Նա վախենում է զրկուել իւր իշխանութիւնից, որ գործադրում է ազգային՝ մօնոպոլ դարձրած մէկ ու կէսնտ հիմնարկութիւնների մէջ. նա չէ կամենում բաց թողնել ազգի ղեկը, որ դարերից իվեր իւր ձեռքի մէջ ունի. նա վախենում է կորցնել իւր բարձր տեղը, որ մինչեւ այսօր վայելում է հասարակական աստիճանների վրայ. նա գիտէ, որ քաղաքական ուրիշ պայմաններում իւր մենաշնորհումները պիտի նուազին եւ չքանան։ Եւ որպէսզի կարողանայ պահպանել իւր դիրքն ու ազդեցութիւնը, նա աշխատում է ազդել միամիտ մարդկանց կրօնական եւ ազգային զգացմունքի վրայ։ Այդ պատճառով էլ թաքնուած եկեղեցու պատերի արանքում, իւր իշխանութեան նշանները՝ հայի խաչն ու հայի աւետարանը ձեռքին՝ ինքնապաշտպանութիւն է միայն քարոզում։

Եթէ նոյն ինքնապաշտպանութեան դրօշն են բարձրացնում տաճկահայ յեղափոխութեան մոլեւանդները կովկասում, դա իհարկէ չէն հիմնում որեւէ մտաւոր ազգակցութեան վրայ, այլ պայմանաւորում են հայութեան „այժմեան“ քաղաքական բարդութեամբ եւ նպատակայարմարութեամբ։ Որպէսզի հայերի «միակ» հայրենիքի փրկութեան գործը չթուլանայ եւ Հայաստանի ազատագրութեան դատը չկաղայ. որպէսզի կովկասահայերի ուշադրութեան կենտրոնը չփոխուի եւ տաճկահայ յեղափոխութիւնը չզրկուի նրանց զէնք ու դրամից. — ռուսահայերին ինքնապաշտպանութեան ճանապարհն են ցոյց տալիս քաղաքական հարուստ հոտառութեամբ օժտուած հայ քաղաքագէտները։ Թէ ինչ արժէք ունի տաճկահայ յեղափոխութեան իդէօլոգիայի այդ մորթափոխ քաղաքականութիւնը կովկասում՝ թողնեմ մի կողմ։ Անհրաժեշտ է սակայն չեշտել, որ եթէ յեղափոխութեան տրամադրուած կովկասի երէկուայ եւ մասամբ էլ այսօրուայ մարդկանց բեւեռեալ մտքի մէջ այդ խօսքը տակաւին հող է գտնում, վաղուայ մարդու թարմ միտքը՝ կրթուած իրական եւ անողոքելի ընթացքի մէջ՝ այլեւս չի ձայնակցի նրան։

Այսպէս՝ այժմեան պայմաններում եւ հայերիս սօցիալ-քաղաքական կացութեան մէջ այդ չորս կուսակցութիւններն են ընդհանուր առմամբ, որ մասամբ առաջ են եկել եւ պիտի գան Կովկասի հայ հասարակութեան մէջ եւ կանոնաւոր կազմակերպութիւն ստանան։ Այժմ արդէն կարող ենք պատասխանել մեր բուն հարցին՝ թէ ինչ պիտի լինեն դաշնակցականները Կովկասում եւ այդ կուսակցութիւններից որին պիտի յարեն։ Դրա մասին հետեւեալ յօդուածում։

Բերլին Ս. Կասեան

ՌՈՒՍԱՀԱՅ ՄԱՄՈՒԼԸ

Մեր բուրժուազիական հովերով տարուած ինտելիգենցիան կարծես՝ դադարած լինելով բուռն թափով խորհել, տենչալ և աշակցելուց, դագարել է նաև տեսնելուց։ Ապա էլ ինչո՞վ բացատրենք մեր լրագրական այն ոլորմելի կուսակցութիւնները, որոնք կորցնելով գաղափարների տարբերութիւնը հրապարակախօսութեան ու կեանքի մէջ, շարունակում են ապրել ու «ոմանրիկ ծակոցներով» իրար հարուածել։ Չէ՞ նշանակում սա, որ այլեւս գոյութիւն չունի գաղափարը, այլ միմիայն կոյր եսամոլութիւնը։ Ցաւ է խոստովանել. բայց դա այսպէս է։

Մի համեմատութիւն «Մշակի» և «Ծարաղի» միջև։ Հրապարակախօսութիւնը՝ այրող, ցնցող հրապարակախօսութիւնը՝ վաղուց է դադարել գոյութիւն ունենալուց այս թերթերում. կան մատենախօսական խծբծանքներ, բայց ոչ քննադատութիւն. դպրոցական ու կրթական հարցերը մոռած են, հայկական իրականութիւնը անկարելի է շօշափել, եկեղեցին ու կղերականութիւնը ծիծաղ էին յարուցանում անցեալում, իսկ այժմ գոյութիւն չունին, ռուսական չինովնիկութիւնը անձեռնմխելի է և այլն։

Ապա էլ ի՞նչ հարցեր են շօշափում այս թերթերը։ — Ոչի՛նչ։ Ռուսահայ թերթ դարձել է օղերեւոյթաբանական կայարանի տեղեկատու եւ տուտուլ ղուրերի ժողովածու։ Գուցէ և մեր թերթերի խմբագրութիւնները գեղեցիկ ցանկութիւններ ունին, բայց ռուսական իրականութիւնը հաշուի չէ առնում այդ ցանկութիւնները։ Գիտակցող մարդիկ վաղուց են գիտակցել մեր մամուլի մանրանալը, հասկացել են, բայց ձեռք ձեռքի չեն խփել և չեն խփում մի բան անելու։ Տեսէ՛ք, նրանք՝ անբաւական հայ մամուլից, դիմում են ռուսականերին, ուր էլի կեանք կայ, ուր կարելի է փարել որոշ գաղափարների ու հոսանքների։ Մենք կարող ենք տասնեակ հայ կարող գրագէտներ հաշուել ռուս մամուլի մէջ, որոնք իրանց յետեւից քաշում են նորերին և այս բոլորը իվնաս հայ գրականութեան, ապա և խաւար հայ ժողովրդին։ Մենակ այս երեւոյթը չէ։ Մեր հին ու նոր գրագէտներից շատերը՝ ասպարէզ չգտնելով հայկական լեգալ իրականութեան մէջ՝ խորը քուն են մտել։ Կեանքը, հայկական կեանքը, մտել է վարագոյրի ետև, իսկ նրանք չեն կամենում գործել վարագուրուած մթնոլորտում։ Եւ այսպիսի պատճառներից մենք ականատես ենք լինում լեգալ հայ մամուլի անմխիթար կացութեան։ Սակայն օգտո՞ւմ է դրանից ռուսական սահմաններն արհամարհող հայ մամուլը։ — Ո՛չ։ Մենք սովոր ենք խունկի ու փառաբանութեան, մեր ստորագրութիւնը վեր ենք դասում գործից և ձեռք չենք մեկնում իսկական մամուլին, որն անկաշկանդ խարազանում է բռնութիւնն ու պարզում

ԾՈՎԻ ՍՕՏ

Եւ ծովի եզերքին կանգնած էի ես։
Տխրադէմ ժայռերը՝ լանջերըն իրանց վէս
Դէմ տուած հեղուկին՝ կուտակուել էին խուռն։
Ալիքներն անաւոր զարնուում էին բուռն։
Դարեւոր մի կաղնի, հաստատ ու քրմահաճ,
Հէնց ժայռի գագաթին, ծռելով դէպ առաջ,
Իր հրպարտ թեւերն էր համարձակ տարածել
Եւ ալեաց մրռունչի վրայ արքայ մի դարձել։
Հեռուում, ամայի ու ցասկոտ ծովի վրան,
Սեւ ամպի իսկ նման կանգնած սկայ դարան,
Վիշապ հողմն էր բռնել արշաւանք մոլեգին,
Դիզելով երկնքում ամպերը մրթագին։
Ստէպ, իրար ետեւից եթերքը պատռելով,
Կայծակն էր դուրս ժայթքում, չուրջ բոլոր վառելով։
Բընութիւնն էր վրսեմ ցասման մէջ իր մոլի։
Երկունքի մէջ էր նա։ Մա՞հ թէ կեա՞նք էր տալի...
Շարունակ ոռնալով, մռնչելով բարկութեամբ,
Խառնուած էր երկինքը ծովի հետ սաստկութեամբ...
Մթապատ էր չորս կողմ։ Թանձրը էր գիշերը։
Զարն իրա գալ բոյնն էր դրել մութ խորշերը։
Զայրացած էին ծովն ու երկինքը խորին
Վայրենի աղմկում, տագնապում ցաւերին։

Կանգնած էի ես, դիտելով այդ մարտը։
Նոյնպէս խիստ, անողոք, գոռ, ինչպէս եւ մարդը
Իր յաւերժ մրցման մէջ, իր կեանքի սուղ կռուում,
Որից դաշտն ծաղկալի դիերով է փուռում։
Հայեացքս պաղեցաւ՝ յառած դէպ արեւելք։
Ա՜հ, ի՜նչպէս. դրժոխքից այդ չը կա՞յ միթէ ելք։
Իսկ մի՞տքը, խաք խօ՞սքը, իսկ կե՞անքը հէնց ինքը,
Մարդկան ճակատագիրն կերակրող այդ ատինքը,
Սո՞ւրբ սընունդ՝ հաւասար բաժնուած ամենքին,
Պարգե՞ւ կենդանութեան բընութեան օրէնքին,
Կա՞նք, ծագած ամպամած չէութեան անդնդից,
Կեա՞նք, աճող ու ծաղկող սեփական արգանդից,
Նորաձեւ կերպերով զարդացող շարունակ,
Իրարից աւելի բարձրը եւ ընդունակ։
Հիւլէ էր անցեալը, անցեալիցը — ներկան,
Ներկայից — առաւել ճոխացած ապագան...
Մե՛ր, տո՛ւր տեղդ մանկան, որ ունի նոր պայման,
Նոր կեանք է ծագում ա՛նդ, ուր քունիդ է սահման։
Այսպէս, կեանքըն ունի իր օրէնքը ներքին,
Ըստեղծող բոլորի, ըստեղծոլ ամենքին։
Այսպէս, միտքն էլ ճաճանչն է նըրա զօրութեան,
Որ ցրւում է խաւարն, տալիս լոյս մարդկութեան...

Կանգնած էի ես միշտ անթարթ հայեացքով...
Եւ անա ինձ թըւաց, թէ ծովն իր ընթացքով,
Ասես թէ բոցերով վառուած ու գրգռած,
Արնագոյն ծուփերով յուզուած էր, փրփրած...
Առաւօտ էր արդէն. արեւի սկուտեղը
Արնագոյն՝ ելնում էր հէնց ծովի մէջտեղը։
Եւ տեսայ երբ ծագեց նոր, պայծառ արշալոյս
Ու ցրւեց անթափանց խաւարը...
Օ՛ դու լոյս...

Լեոնց.

ԾՈՎԻ ՍՕՏ

Եւ ծովի եզերքին կանգնած էի ես։
Տխրադէմ ժայռերը՝ լանջերըն իրանց վէս
Դէմ տուած հեղուկին՝ կուտակուել էին խուռն։
Ալիքներն անաւոր զարնուում էին բուռն։
Դարեւոր մի կաղնի, հաստատ ու քրմահաճ,
Հէնց ժայռի գագաթին, ծռելով դէպ առաջ,
Իր հրպարտ թեւերն էր համարձակ տարածել
Եւ ալեաց մրռունչի վրայ արքայ մի դարձել։
Հեռուում, ամայի ու ցասկոտ ծովի վրան,
Սեւ ամպի իսկ նման կանգնած սկայ դարան,
Վիշապ հողմն էր բռնել արշաւանք մոլեգին,
Դիզելով երկնքում ամպերը մրթագին։
Ստէպ, իրար ետեւից եթերքը պատռելով,
Կայծակն էր դուրս ժայթքում, չուրջ բոլոր վառելով։
Բընութիւնն էր վրսեմ ցասման մէջ իր մոլի։
Երկունքի մէջ էր նա։ Մա՞հ թէ կեա՞նք էր տալի...
Շարունակ ոռնալով, մռնչելով բարկութեամբ,
Խառնուած էր երկինքը ծովի հետ սաստկութեամբ...
Մթապատ էր չորս կողմ։ Թանձրը էր գիշերը։
Զարն իրա գալ բոյնն էր դրել մութ խորշերը։
Զայրացած էին ծովն ու երկինքը խորին
Վայրենի աղմկում, տագնապում ցաւերին։

Կանգնած էի ես, դիտելով այդ մարտը։
Նոյնպէս խիստ, անողոք, գոռ, ինչպէս եւ մարդը
Իր յաւերժ մրցման մէջ, իր կեանքի սուղ կռուում,
Որից դաշտն ծաղկալի դիերով է փուռում։
Հայեացքս պաղեցաւ՝ յառած դէպ արեւելք։
Ա՜հ, ի՜նչպէս. դրժոխքից այդ չը կա՞յ միթէ ելք։
Իսկ մի՞տքը, խաք խօ՞սքը, իսկ կե՞անքը հէնց ինքը,
Մարդկան ճակատագիրն կերակրող այդ ատինքը,
Սո՞ւրբ սընունդ՝ հաւասար բաժնուած ամենքին,
Պարգե՞ւ կենդանութեան բընութեան օրէնքին,
Կա՞նք, ծագած ամպամած չէութեան անդնդից,
Կեա՞նք, աճող ու ծաղկող սեփական արգանդից,
Նորաձեւ կերպերով զարդացող շարունակ,
Իրարից աւելի բարձրը եւ ընդունակ։
Հիւլէ էր անցեալը, անցեալիցը — ներկան,
Ներկայից — առաւել ճոխացած ապագան...
Մե՛ր, տո՛ւր տեղդ մանկան, որ ունի նոր պայման,
Նոր կեանք է ծագում ա՛նդ, ուր քունիդ է սահման։
Այսպէս, կեանքըն ունի իր օրէնքը ներքին,
Ըստեղծող բոլորի, ըստեղծոլ ամենքին։
Այսպէս, միտքն էլ ճաճանչն է նըրա զօրութեան,
Որ ցրւում է խաւարն, տալիս լոյս մարդկութեան...

Կանգնած էի ես միշտ անթարթ հայեացքով...
Եւ անա ինձ թըւաց, թէ ծովն իր ընթացքով,
Ասես թէ բոցերով վառուած ու գրգռած,
Արնագոյն ծուփերով յուզուած էր, փրփրած...
Առաւօտ էր արդէն. արեւի սկուտեղը
Արնագոյն՝ ելնում էր հէնց ծովի մէջտեղը։
Եւ տեսայ երբ ծագեց նոր, պայծառ արշալոյս
Ու ցրւեց անթափանց խաւարը...
Օ՛ դու լոյս...

Լեոնց.

է մեր անմխիթար կացութիւնը։ Անկարելի է, որ հայ հասարակութիւնն չըմբռնէ թէ սարերի ձիւնելը, գետերի յորդանալը, երաշտն ու ցուրտը հասարակական խնդիրներ չեն կազմում և որ դրանցով զբաղող մամուլը հասարակական գործ չէ կատարում, թէ հայ ժողովրդի բարեկամը ոչ-լեգալ մամուլն է, որ դժուարամարս ձևեր ու դարձուածներ չէ ստեղծում մի միտք յայտնելու համար, որ պաշը չէ խաղացնում ռուսական գրաքննիչի առջև։ Եւ քանի որ դա այդպես է, քանի որ մեր օգուտն էլ ազատ մամուլի ծաւալման մէջ է, թող հայ հրապարակախօսը, վիպագիրը, տնտեսագէտը, թղթակիցը ճանաչեն ու աչակցեն այդ մամուլին։ Թող հայրենիքի ոչ մի խորշ անտես չմնայ այդ մամուլին կամ չխուսափէ այդ մամուլից։ Ահա մի գործ, որ չափազանց դիւրին ու չափազանց օգտակար է։ Այդ գործը կարող է հային ինքնուրոյնութեան ոյժ շնորհել, ինքնուրոյն խորհել, դատել ու գործել տալ։ Մեր հաւատն է, որ եթէ ռուսական օրէնքը չճանաչող մամուլը դառնայ մեր առանձին հոգացողութեան առարկան և այդ մամուլի գործակալներն ու թղթակիցները տարածեն փըրկակար գաղափարները և լոյս աշխարհ հանեն հայ ժողովրդի արցունքն ու հոգոցը, այն ժամանակ՝ «թող փչէ՛ Հիւսիս պաղպաղ երեսիս»... Այսքանը սահմաններ արհամարհող մամուլի մասին։

Իսկ ի՞նչ պիտի անեն «տէրտէրական թօրբա», «մածունա», «տիրացու», և իրաւամբ այլ անուններ վաստակած հանդէսներն ու թերթերը։ «Մշակ», «Մուրճ», «Ծարաղ», «Լուսայ», «Նոր-Դարա» և այլն, միայն մի ասպարէզ ունին, որ կայանում է մարդաբանութիւնների մէջ։ Ռուսական գրաքննիչը թոյլ է իր մկրատով գիտութեան առջև, թէև նա գունաւորել ու խարդախել գիտէ այդ գիտութիւնը։ Մանաթացրէ՛ք հայ ընթերցողին գիտութեան հետ, քանի որ անպօր է այլ կերպ մի գործ կատարել։ Գիտութիւնն յեղաշրջող ոյժ է։ Զարին ու բարիին գիտակից մարդը հեշտ է ըմբռնում իրերի դրութիւնը։ Ահա՛ գործունէութեան լայն ասպարէզ։

Ու եթէ մեր հանդէսները անկարող կը լինեն ըմբռնել այս միտքը, եթէ նրանք կը շարունակեն ոտնահարել գիտութիւնն ու իրանց ծաւալման համար յոյս կը դնեն լոկ աղգասիրութեան վրայ, — նրանց գործն ու աղդեցութիւնը կը լինի կասկածելի ու անօգուտ։ Հայ ընթերցողը որոշ պահանջներ ունի. նա իր սրտին և ուղեղին ազդող նիւթ է պահանջում հայ մամուլից։ Բաւական՝ է որքան ոտնահարուեցին այդ պահանջները։ Հայ ընթերցողին էլ հետաքրքիր չեն Լէո-Շերվանդադէական ըվլոցը, Մըշակ-Լուսայական կլօունութիւնները։ Հայ թերթը, եթէ միայն նա հրատարակում է հասարակութեան համար, պէտք է ծառայէ այդ հասարակութեան և ո՛չ թէ դառնայ կեղտաս ու մանր հաշիւների տոպրակ։ Մենք պահանջներ ու սպասելիքներ ունինք հայ մամուլից...

Պաթում. Ջրաբերդեան

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԻՄ ՆԱՄԱԿՆԵՐԸ Ա-ԻՆ

ՆԱՄԱԿ V.

Սիրելի ընկեր!

(շար. նախորդ թիւէն եւ վերջ)

Ցաւօք սրտի պէտք է ասել, որ՝ պղերգ, շուայտ, անտարբեր և անկօհոլի խոնարհ երկրպագու Ռուս մասսան մինչև ողն ու ծուծը — բառիս ամենալայն նշանակութեամբ — անբարոյականութեան և աղքատութեան անողոք ճիրանների մէջ իւր սև հոգոցն է կարդում, որ վեներական զաղրելի ախտերի, ժառանգական ալկօհոլիզմի և նոյնատեսակ հիւանդութիւնների ծանր հարուածներ տակ հեծում է Ռուս ժողովուրդը, որ ամենայն անտարբերութեամբ նոքա իրենց տկլորուրոպիկ երեխաներին, կնկան, սոված ու ծարաւ, սառնամանիքների աշխարհում թողնելով, իրենց ամենավերջին կոպէկը (իսկ այդ էլ չեղած դէպքում իր տան ամենավերջին հագուստը կամ իրեղէնը տանում ծախում) և գինետների ու հասարակաց տների մշտնջենական պատուաւոր հիւրը լինելուց ձեռք չեն քաշում, իսկ իրենց կանանց առաջարկում են անբարոյականութեան անարդ կոպէկներով իրենց և իրենց երեխաներին պահել։ Դժբա համար ինք պետութիւնը ոչ թէ միայն չի աշխատում ժողովրդի այդ անմխիթար կացութեան առաջն առնելու, այլ ընդհակառակը, նա ինքն է ամենափառաւոր կերպով նպաստում այդ անբարոյականացուցիչ կործանիչ հիմնարկութիւնների յառաջ տանելուն և ծաղկեցնելուն։ Այդ առնում է կառավարութիւնը, բացի մի քանի ամենայետին նպատակներից, և նորա համար, որ իւր ամենամեծ եկամուտը հէնց այդ 2 հիմնարկութիւններից է ստանում, որ միմիայն խմիչների պետական-մենավաճառումից (ինչպէս գիտես, 1894 թ. ռուս պետութիւնը Ռուսաստանի ոգելից խմիչքների վաճառը միայն իրեն է վերապահել — որպէսզի Ռուսաստանի հարբեցողութիւնը մեղմացնելու. բայց արի տես, որ հիմայ աւելի է սաստկացել և այլանդակ ձևականութիւնների է հասել) իւր ամբողջ պետութեան եկամուտների երրորդ մասը ստանում է։ Ռուս պետութիւնը մինչև անգամ արգիլած է Ռուսաստանի միակ հակալկօհոլական ընկերութեան («Общ. Трезвости») իւր ծրագրի մէջ առ հասարակ «ալկօհոլի միանգամայն վնասակարութեան» բառեր գործածելու, այլ պէտք է լինի «ալկօհոլի չափից դուրս գործածութեան վնասակարութիւն» բառերը. որովհետև պարզ է, որ ամենից առաջ պետութիւնը չի ուզում իւր հսկայական եկամուտներից զըրկուել՝ էլ հոգ չէ որ ժողովուրդը փչանում, անբարոյականանում է։ Բայց չէ՞ որ պետութիւնն էլ հէնց այդ է ցանկանում — պղտոր ջրում ձուկ որսալու համար։

Զմոռնամ այստեղ շեշտել, որ Ռուսաստանում պրօստիտուցիան (ֆիզիք. և բարոյ. անկումը) միմիայն՝ այսպէս ասած՝ պաշտօնական «հասարակաց տներ» և «գինետներ» բառերով չի սահմանափակվում. ես այնքան էլ յուռեստես չեմ կեանքի վերաբերմամբ։ Խնդիրը նորանումն է, որ իւրաքանչիւր մի փողոց, հրապարակ, հիւրանոց, ճաշարան, թատրոն, այգիներ, մի խօսքով իւրաքանչիւր մի քայլափոխում, թէ կարիքից ստիպուած և թէ մանանդ անզուսպ տափանքի համար իրենց թանկագին կեանքն ու պատիւը վաճառող կանանց և աղջկանց անվերջ լեգէօնների կը պատահես։ Մի զարմանար, որ Ռուսաստանի քաղաքներում ոստիկանութեան հետ թև թևի տրուած, նոցա աչքի առաջ գիշերները և մինչև անգամ ցորեկները՝ շրջիկ պրօստիտուտկաների ձեռքից ազատուել չի լինի, բըռնութեամբ միամիտ ճանապարհորդներին իրար են քաշքշում։ Երևակայիր մի րոպէ, թէ մեզ նման արևելցի մի նահապետական ընտանիքի անդամի վերայ ի՞նչ սոսկալի տպաւորութիւն պէտք է գործի այս անասնային տեսարանը...

Չէ, ընկեր! հրէական ճաճանչաւոր երևակայութեան անբարոյականացած Սոդոմ և Գոմոր քաղաքներն էլ ներկայ Ռուսաստանի քաղաքների, գիւղերի և մինչև անգամ ընտանիքների ծայրագոյն անբարոյականութեան հետ չեն կարող մրցել։ Մինչև օրս դժբաղտաբար ռուս պետութեան աչ ու ձախ սփռած միակ ցիֆիլիզացիան այդ է եղել։ Որտեղ որ ռուս բռնակալը ոտք է կոխել, այդ է եղել նուաճուած ազգերի յետագայ սերունդներին թողած իւր բռնակալական մեծագործութեան աւանդն ու ցիֆիլիզացիան, և այդ է եղել մինչև օրս նորա կոպիտ քաղաքականութեան խախուտ ու տմարդի նշանաբաններից մէկը։ Ողորմելի՞ քաղաքականութիւն...

Դժբաղդաբար ռուսական քաղաքակրթութիւնից չէին կարող զուրկ մնալ և մեր երբեմնի նահապետական Կովկասի մաքուր քաղաքները՝ որտեղ թափուած են հազարաւոր պոռնիկ կանայք և աղջիկներ, որտեղ փայլում են հասարակաց տների և հարբած վեր ընկածների քաղաքակրթութիւն տարածող ջեռուցիչ ճառագայթները։ Մենք էլ իհարկէ տարաբաղտաբար զուրկ չենք կարող մնալ այդ անխուսափելի ցիֆիլիզացիայից։ Մենք հա, երբ էլ այժմ թունաւոր վեներական ախտերի, ռուս կանանց հետ ունեցած ապօրինի (մինչև իսկ յաճախ օրինաւոր) ամուսնութիւնների, բաքոսի և կարտի սեղանների վերայ լուսացնող ևն. ևն. բացասական քաղաքագործութեանց կողմից յետ չենք մնում «Մայր-Ռուսաստանից»։

Ասում են, որ Անիում ինչ որ «կուսանաց վանք» (թէ՞ հասարակած տուն» անուան տակ մի քանի հարիւր կոյսերի համար վանք պէտք է շինեն։ Մինչև անգամ անցեալ ամառ ուսումնասիրելու և մանրամասն տեղեկութիւններ հաւաքելու համար. ռուսական մի յանձնաժողով Անի էր գնացել։ Երբ Անիի ներկայ կըրակոտ վանահայր Յովհաննէս վարդապետը լսում է այդ բանը՝ բարկութիւնից՝ կատաղած պատասխանում է, որ «ես էլ 400 հատ վարդապետ եմ բերելու նոցա մէջ»։ Իսկի՞նչ ես կարծում, փոխանակ նոքա ամաչելու, ծիծաղել են։ Եւ շատ պարզ է, քանի որ իրենք էլ Աստուծուց այդ են ուզում...

Վերջերքս յամառ կերպով լուրեր է պտտում, որ այդ միևնոյն ոտոր միտումներով, ռուսաստանից եկաց հազարաւոր պոռնիկ կանանց խմբերով՝ պէտք է հեղեղեն Կովկասի քաղաքները... Կեցցէ՞ ռուսական պոլիտիկան և նորա ցիֆիլիզացիան։

Ցտրութիւն

Քեզ միշտ սիրող ընկեր՝

Մոսկուա Արար

ՆԱՄԱԿ ՀԱՅՐԵՆԻՔԷՆ

Ա...Х գիւղ. 20 փետր. 1904

Ազնիւ բարեկամս,

Թէպէտ և շատոնց կը փափաքէի ձեզ մի նամակ գրել, բայց և այնպէս այլևայլ պատճառներով յետաձգուեցաւ։ Ա՛ալ դիտեմ որ այս նամակը ստանալով մէկ կողմէն պիտի ուրախանաք, իսկ միւս կողմէն պիտի տխրիք, երբ պարունակութիւնը հասկնաք։

10—15 օր առաջ մի քանի թիւրք ոստիկաններ մեր գիւղը եկան տուրքերը հաւաքելու համար, և այնպիսի միջոցներ ձեռք առին որ խեղճ գիւղացիքս չի կարողացանք դիմանալ անոնց անխղճութեան։ Այս անարդ ոստիկանները, ինչպէս ամէն անգամ, այս անգամ ալ ստիպեցին, որ

նախ իրենց պէտքերը հոգացուին։ Բաւականին ուտել խմելէ յետոյ, երբ կարգը եկաւ տուրքերը հաւաքելուն, սկսան գիւղին մէկ ծայրէն միւսը պտտիլ։ Ամէն կողմ ճիչ, աղաղակ կը լսուէր և ցաւալի տեսարաններ կը պարզուէր։ Խեղճ գիւղացին սարսափահար՝ չունենալով դրամ, որ այդ անհիմն տուրքերը վճարէ, ինչ ընելիքը չէր գիտեր. ոմանք տուներէն սկսան փախչիլ, ոմանք ալ պարտք-խարճ ընելով կարողացան երկու օր կերակրելէ յետոյ զանոնք ճամբու դնել։ Բայց մի քանի օր անցած, դարձեալ եկան անոնք ու նորէն պարզուեցան միևնոյն տեսարանները։ Մեծ, բանտ այլևս մեզի համար ամենօրեայ դէպքեր են։

Մի քանի ամիս առաջ նոր օրէնք ելած էր թէ ամէն անասունի համար պէտք է տուրք վճարել, այսինքն մէկ ջորիին 30 դահեկան, ձիուն՝ 20, կովուն ու եզին՝ 10-ական, հաւին և ուրիշ թռչուններու՝ 3 1|2-ական դահեկան էին։ Ահա այսպիսի միջոցներով ալ կառավարութիւնը կուզէ մի քիչ աւելի դրամ շորթել։ Եւ կարծես չէր բաւեր աս, անխիղճ կառավարութիւնը եկաւ լուծ մը ալ աւելցնել մեր վրին։ Կառավարական բոլոր թուղթերը, որոնց վրայ կը փակցուին արդէն հին նամակդրոշմները, հիմայ նոյնպէս պէտք է կրեն եղեր նոր ելած Հիճազի մարքաները, որոնց գինն է 20 դահեկան։

Կառավարութիւնը՝ սաստիկ նեղութեան մէջ՝ գիշեր ցերեկ կը մտածէ դրամ գտնել... և տուժողը միշտ հայն է։ Վերջերս թուրք պաշտօնեաները ամսական առած չբաւելով՝ կը դիմեն կառավարութեան. ան ալ կը պատասխանէ. «ահա՛ հայերը, ինչ կընէք ըրէք, մենք դրամ չունինք տալու»։ Այսպէս թուրք պաշտօնեաները՝ աւելի սիրտ առած՝ շարունակ կը յարձակին հայ գիւղացիին վրայ և բռնութեամբ դրամ կը ժողվեն...

Այս է մեր վիճակը և միշտ ցաւալի՝ քանի կայ մեր վրին բռնապետական այս անարգ լուծը։ Մեր վերջին յոյսը դրած ենք արտասահմանի մեր հայրենակիցներուն վրայ...

Սպասելով ձեր բարի լուրերուն, միշտ ձերդ՝

Թ. Ա.

ԿԱՐՍ, 1904 թ. Մարտ

Իշարս ռուսական բարբարոսութիւնների, հարստահարութիւնների և խժդժութիւնների՝ մենք մեր նախորդ թղթակցութիւնների մէջ տուել էինք նաև նմոյշներ Կարսի ոստիկանապետ գիժ Միխակո Խերխէուլիձէի քստմնելի մատնութիւններից, զբաղարտութիւններից, որոնց զոհ գնացին — այժմ ևս զոհ են գընում — Կարսի հայ ժողովրդի միջից վոքր իշատ աչքի ընկնող երիտասարդները, վաճառականները, արհեստաւորները։ Գիժ Միխակոյի Կարսի հայ ժողովրդի վրայ իշխելը շա՛տ կարճատև եղաւ։ Այն մարդը, որ երէկ տոսկալի գործեր էր կատարում, այսօր ինքն է ընկել այս կամ այն հայ վաճառականի, արհեստաւորի ձեռքն ու ոտքը — փրկել իւր կեանքը «յանուն մարդասիրութեան», «յանուն քրիստոնէութեան», «իսէր Աստուծոյ», «իսէր իրենց (հայերի) զաւակներիս». վանդի ինքը վաստակած լինելով խոզի նման 13 հատ աղջիկ ու տղայ, — որոնք բոլորն էլ ողջ ու առողջ են, — եթէ իրեն (ոստիկանապետին) պաշտօնից հանեն՝ անօթութիւնից կը ջարդուին...

Ժամանակաւոր յաջողութիւնից հպարտացած, գոռոզացած՝ այդ ինքն ըստ ինքեան ոչնչութիւն կազմող մարդուկը ա՛յնքան լրբացաւ, երես առաւ Կարսի նահանգի անտէրութիւնից, որ սկսեց ինքնիշխան կառավարել երկիրը՝ հարիւրաւոր հայ ընտանիքներին զրկելով աշխատող ձեռքերից, աքսոր զրկելով կամ բանտ նետելով։ Այսօր բազմաթիւ անմեղ հայերով լի են Կարսի հսկայ բանտերը, այսօր բազմաթիւ հայեր Ռուսիոյ ամենահեռաւոր խորքերում տառապում են, տարագրութեան մէջ ախ ու վախ քաշելով՝ իրենց ընտանիքը, սիրասուն սովալլուկ զաւակները յիշելիս...

Ընթերցողներին արդէն յայտնի է որ Կարսի ոստիկանապետը, իւր օգնականը և մի նախկին յոյն քարտաշ գիւղացի Խարալամպիյ (Համբո կոչեցեալ) Փիլորովը — որից 100 ռուբլի ոստիկանապետը իւր օգնականի ձեռքով կաշառք առնելով՝ անցեալ տարի նշանակել է ոստիկանատան թարգմանի պաշտօնում — վերջին դէպքերից օգտուելով՝ խոշոր գումարներ շորթեցին հայ վաճառականներից, հարուստներից, որպէսզի իբր թէ կասկածելի հայերի ցուցակից հանել տան նրանց... Եւ այդ նպատակով իրենք — երեքը մասին — կազմելով մի ահագին ցուցակ՝ պարբերաբար, հերթով կանչում էին իրենց մօտ հայերին և յայտնում որ նրանք դատապարտուած են աքսորի իբրև յեղափոխականներ և այլն։ Այն ժամանակ ըսկսվում էր սակարկութիւնը. հարիւրներից բարձրացնելով մինչև հազարի կամ հազարների՝ նրանք «կասկածելի հայերիս» անուանց և ազգանուանց դէմ, նրանց ներկայութեանը, գրում էին (իհարկէ փողերը ստանալուց յետոյ) թէ՝ «մեր կատարած նոր քննութիւնից պարզուեց, որ այս ինչ հայը բոլորովին մասնակից չէ հայ յեղափոխական քստմնելի գործին, ուստի անպարտ է ճանաչուած»... Եւ այդ զզուելի ո՛չ մի երկրում թերևս մինչև օրս — բացի Ռուսիայից — տեղի չունեցած նոր ձևի հարստահարութիւնը, ճընշումը, յափշտակութիւնը տևում է մի ամբողջ տարի՛... Բայց դիմակը պատռուեց և մեր հրէշը ներկայացաւ իւր պատրօններին — աչքով (մի աչքը չի՛ տեսնում) ու հոգով կոյր նահանգապետ Սամօյլովին ու կառավարչապետին — որոնք, հակառակ իրենց բուռն ցանկութեան — պաշտպանել իրենց արժանաւոր ծառայ Միխակոյին — անկարող են այժմ պաշտպանել... վանդի գործը կամաց-կամաց խոշորանալով՝ վերջի վերջոյ պիտի հասնի «ամենաողորմած» թագաւոր կայսրին։

Բանը նրանումն է, որ 1903 թ. օգոստոս ամսուայ ընթացքում կալանաւորուած բազմաթիւ հայերին գլխաւոր բանտում տեղ չլինելու պատճառով վարձում են մի նոր շինութիւն, ուր և զետեղում են նրանց, այդ անմեղ «քաղաքական յանցաւորներին»։ Նոր բանտի կառավարիչ է նշանակվում մեր ծանօթ Համբո Փիլորովը, որ քաջ հայերէն խօսել գիտենալով՝ մտնում է պարզամիտ հայ բանտարկեալների մէջ, ռուսատեաց ձևանալով դուրս քաշում նրանցից շատ «գաղտնիքներ» ու պարբերաբար գրաւոր յայտարարութիւններով հաղորդում իւր պատրօնին՝ Միխակոյին.... Այդ ծառայութեանց համար էլ՝ իբր վարձատրութիւն՝ ոստիկանապետը, հակառակ ռուսաց օրէնքի, ծածուկ թոյլտուութիւն է ձեռք բերում Փիլորովի համար զինուորական աստիճանաւորների նման համազգեստ հագնելու և ուսանոցներ դնելու։ Նախկին տգէտ, քարտաշ յոյնը՝ շլացած գրաշնաց ուսանոցներից՝ բանտում և՛ս կատարում է մի շարք սոսկալի գործեր, այսինքն ոստիկանապետի կարգադրութեամբ ու գիտութեամբ բանտարկեալների հարիւրաւոր հարազատների ու բարեկամների բերած կամ զրկած փողերը տէրերին չէր հասցնում, այլ բաժանում էր՝ իրա, ոստիկանապետի և վերջինիս օգնականի միջև։ Այսպէս Ծննդեան նախընթաց և Բուն-բարեկենդանի օրերը բազմաթիւ հայերից ոտացած հարիւրներից ո՛չ մի կոպէկ տէրերին չհասցնելուց իզատ՝ բանտարկեալներից էլ սկսում են մեծ քանակութեամբ փող կորզել, որպէսզի նոցա պատիժը թեթևացնեն և Խարկովի, Օրէնբուրգի, Ուֆիմսկի, Իրկուտսկի և այլ հեռաւոր նահանգներ աքսորելու փոխարէն՝ զրկել տան նոր-Նախիչևան, Բոստով Դոնի վրայ և այլ մօտակայ նահանգներ ու գաւառներ։ Սակայն ցաւ՝ խիստ պիտի ասել, որ այդ ստոր և միանգամայն գազանային միջոցներով խե՜ղճ հայ բանտարկեալների վերջին կոպէկը գրպանից հանելով՝ իրենց խոստումը էլի չէին կատարում, այլ ընդհակառակը, ամենքին չարաչար պատիժներ էին տալիս, իսկ՝ իրանք ...ժամանակաւորապէս հրճուում։

Սակայն այդ հարստահարիչ պաշտօնեաների բարդիանները ընդմիշտ չրջում է։ Ահա թէ ինչպէս։ Բանտի կառավարիչ Համբո Փիլորովը կամենալով ոստիկանապետին 900 ր. կաշառք տալով ձեռք բերած պաշտօնը իւր վրայ ձրի նստացնել, «քաղաքական յանցաւորներից» մէկին՝ Երևանի Ղազանչեանից մի խոշոր կաշառք վերցնելով՝ բանտից փախցնում է. սակայն նա չի կարողանում օգտուիլ իրեն «շնորհուած ազատութիւնից և Ալէքսանդրապոլում կալանաւորուելով՝ բերվում է նորից Կարսի գլխաւոր բանտը։ Կամայ ակամայ նա՝ նանգապետի հրաւիրանքը՝ Երևանից գալիս է քննիչ և մանրամասն քննութիւն կատարում այդ առթիւ։ Թէ՛ Ղազանչեանը և թէ ուրիշ բանտարկեալ հայեր Երևան են հանում Համբոյի մի շարք զեղծումները և այն որ նա իւր պատրօնի՝ ոստիկանապետի՝ անունով թալանում էր բանտի մէջ իւրաքանչիւր հային։ Առիթից օգուտ քաղելով՝ հայ թալանուած վաճառականներից էլ խնդիրներ առուողներ եղան որոնք մի առ մի թուում են մեր հերոս յոյնի սխրագործութիւնները...

Գիժ Միխակոն՝ տեսնելով որ իւր դիմակը հետզհետէ վերցուելով ինքը պէտք է ներկայանայ պատրօններին իւր ամբողջ հրէշային այլանդակութեամբ, համոզում է «ծերունազարդ» նահագապետին անմիջապէս իսպառ հեռացնել Համբոյին պաշտօնից, որով և կը դադարեն ամէն տեսակ գժգոհութիւններ հայերի կողմից... Սակայն մեր «խելօք» վրացին աղուէսի պէս երկու ոտքով ինքնաբարեբար՝ ընկաւ թակարդը։ Խորամանկ յոյնը ոստիկանապետի օգնականի միջոցով պահանջեց Միխակոյից չարձակել իրեն պաշտօնից, հակառակ դէպքում ինքն էլ հարկադրուած կը լինի բարձր. իշխանութեան առջև բաց անելու ոստիկանապետի անթիւ գաղտնիքները, կաշառակերութիւնը, և հաստատելով այդ ամենը փաստաթղթերով՝ տնով-տեղով յաւիտենական աքսոր զրկել կուտայ Սիբիրի խորքերը...

Մեր «խելօք» ազուէսը մնացել էր երկու կրակի մէջ. ո՛չ կարող էր այլևս պաշտպանել գաղտնի կտրած յոյնին և ո՛չ էլ արձակել պաշտօնից։ Երկար կը լիներ նը-կարագրութիւնը, եթէ կամենայինք մի առ մի թուել այն միջոցները, որոնց դիմեց յիմար վրացին Համբոյին՝ համոզելու համար, որ հեռանայ պաշտօնից առանց իւր գաղտնիքները երևան հանելու. բայց նա մնաց անդրդուելի իբրև «կամքի տէր» յոյն...

Հովսեփ Դիլմաքեան

(Շարունակելի)

Ստացանք Սոֆիա հրատարակուած Պուլկ.-Հայ.-Տաճ. մաքուր տպագրութեամբ ԲԱՌԱՐԱՆ-ը, որ կը բաղկանայ 592 էջէ եւ կը պարունակէ մօտ 30,000 բառ։ Գինն է 5 ֆրանք։

Դնելու համար դիմել հեղինակին՝ Ասատուր Մկրտիչեան —Սոֆիա։

Отговорникъ: Степанъ Г. Степанянъ

Печат. Б. Н. Малджиевъ. — Русе.